ԵԱՀԿ

ՎԱՔԻԼԵՎ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴԻՆ

Վարորդ-տեսուչ հարաբերություններում

ԵՐԵՎԱՆ 2013

Համաձայն չեք վերագրված խախտման հետ

1.Խնդրեք տեսուչին ցույց տալ տեսագրած խախտումը: Պատասխանները կարող են լինել՝
-պարտավոր չեմ ցույց տալ, սարքը չի աշխատում, միացված չէ, հրաժարվում է ցույց տալ և այլ պատճառներ:
2.Ուշադիր կարդացեք արձանագրությունը և կատարեք հետևյալ գրառումը՝ ստորագրելով այն՝
«Խախտում չեմ կատարել: Արձանագրված է առանց ապացուցելու խախտումը: Գործի նյութին կցել տեսուչի տեսագրած խախտումը:»
3. Վերադասության կարգով բողոքարկեք որոշումը (ձևը տես՝ «achill.am» WEB-կայքի գլխավոր էջում):

Երբ մեքենայի աշխատանքը խաթարվել է կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակն է վատացել կանգառն արգելված տեղում (հարկադրված կանգառ)

Ճանապարհի կանգառն արգելված տեղում կանգառ կատարելուց հետո՝անհապաղ միացրեք վթարային լուսային ազդանշանը, ինչպես նաև 15 մետր հեռավորության վրա տեղադրեք «Վթարային կանգառ» ճանաչման նշանը, որից հետո ձեռնարկում եք բոլոր միջոցները մեքենան այդ վայրից դուրս բերելու համար:

Երբ տեսուչը արգելում է արձանագրության բովանդակությունում գրել Ձեր անհամաձայնությունը

Տեսուչի պատճառաբանությունները կարող են լինել՝
-բացատրությունը կներկայացնեք դատարանում, բացատրություն գրելը պարտադիր չէ և այլ պատճառներ:
Քանի որ խախտվել է Ձեր պաշտպանվելու իրավունքը, ապա՝ անհապաղ դիմում-բողոք ներկայացրեք (ձևը տես «achill.am» WEB-կայքի գլխավոր էջում) ՀՀ ճանապարհային ոստիկանության պետի անունով՝ չստորագրած ենթադրյալ վարչական որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Համաձայն չեք սահմանված առավելագույն արագությունը գերազանցելու հետ

1.Խնդրեք տեսուչին բացատրել մոնիթորի վրայի բոլոր գրառումների և թվերի նշանակությունը և իմաստը:
2. Համոզվեք, որ տվյալ արագաչափը սահմանված ժամկետում (տարին մեկ անգամ) ստուգաչափվել է:
3.Ուշադիր կարդացեք արձանագրությունը և կատարեք հետևյալ գրառումը՝ ստորագրելով այն՝
«Բովանդակության հետ համաձայն չեմ: Խախտման վերաբերյալ բավարար բացատրություն չեմ ստացել: Գործի նյութին կցել տեսագրած խախտումը»:
4. Վերադասության կարգով բողոքարկեք որոշումը (ձևը տես «achill.am» WEB-կայքի գլխավոր էջում):

Համաձայն չեք ամրագոտին չամրակապված վիճակում երթևեկելու հետ

1.Խնդրեք տեսուչին ցույց տալ տեսագրված խախտումը:
Պատասխանները կարող են լինել՝
-պարտավոր չեմ ցույց տալ, սարքը չի աշխատում, միացված չէ, հրաժարվում է ցույց տալ, այլ պատճառներով:
2.Խախտումը քննարկելու ժամանակ պնդեք ամրակապված վիճակում լինելու Ձեր դիրքորոշումը:
3.Ուշադիր կարդացեք արձանագրությունը և կատարեք հետևյալ գրառումը ստորագրելով այն՝ «Երթևեկել եմ ամրագոտին ամրակապած վիճակում: Գործի նյութին կցել տեսուչի կողմից տեսագրած խախտումը»:
4. Վերադասության կարգով բողոքարկել որոշումը (ձևը տես «achill.am» WEB-կայքի գլխավոր էջում):

Տեսուչի անօրինական գործողությունների դեպքերում ահազանգեք՝ ՀՀ Ճանապարհային ոստիկանության հերթապահ մաս՝ հեռ. 52-27-63 կամ ՀՀ Ճանապարհային ոստիկանության պետի տեղակալին՝ հեռ. 52-28-24 կամ ՀՀ Ճանապարհային ոստիկանության պետին՝ հեռ. 58-59-94:

Ձեր իրավունքների պաշտպանը ֆինանսական շուկայում

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐ

Մեր ծառայություններն ԱՆՎՃԱՐ են, իսկ պահանջի քննության գործընթացը՝ ԱՐԱԳ է և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ:

Հիշեք՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում՝

- **անմիջապես զանգահարեք ապահովագրական ընկերություն և ոստիկանություն, տեղեկացրեք պատահարի մասին և հետևեք նրանց հրահանգներին,**
- **մի տեղաշարժեք տրանսպորտային միջոցը, եթե այդպիսի հրահանգ չունեք իրավապահ մարմնից,**
- **մի ընդունեք Ձեր մեղավորությունը ՃՏՊ-ում՝ առանց ապահովագրական ընկերության հետ խորհրդակցելու,**
- **մի լքեք պատահարի վայրը՝ մինչև ապահովագրական ընկերության և ոստիկանության պատահարի վայր ժամանելը,**
- **պահանջեք ճանապարհային ոստիկանությունից իրականացնել վարչական վարույթ, եթե դուք համաձայն չեք և չեք ընդունում Ձեր մեղավորությունը վթարի առաջացման մեջ,**
- **հատուցում ստանալու համար դիմեք ապահովագրական ընկերություն՝ առաջին իսկ հնարավորության դեպքում,**

Դիմեք մեզ, եթե՝

- **դուք համաձայն չեք Ձեզ և Ձեր գույքին պատճառված վնասի չափի հետ,**
- **Ընկերությունը հրաժարվում է հատուցել Ձեզ պատճառված վնասը կամ ձգձգում է ողջամիտ ժամկետում ապահովագրական հատուցման վճարումը,**
- **Ընկերությունը տուժողին վճարել է ապահովագրական հատուցում և Ձեզանից առանց հիմնավոր պատճառների պահանջում է հետ վերադարձնել հատուցված գումարը, որն, ըստ Ձեզ, գերազանցում է փաստացի վնասի չափը,**
- **առաջացել են վեճեր կամ տարաձայնություններ ֆինանսական կազմակերպությունների հետ:**

Հեռ. 58-23-22, 58-23-21
www.fsm.am, info@fsm.am

Հրատարակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի օժանդակությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են **«Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն** ՀԿ-ին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետների հետ:

ՀՀ, ք. Երևան, 0054, Դավթաշեն 1-ին թաղ., 51 շենք, 29 բն.,
Հեռ.՝ (+374 10) 36 19 40, www.achill.am